

**Հայաստան Ծառատունկ Ծրագիրը սահմանում է նոր ցուցանիշ՝ տնկելով մեկ միլիոն ծառ
Լոռվա մարզում**

Հայաստան Ծառատունկ Ծրագիրը («Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ), համագործակցելով ՀՀ կառավարության և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հետ (ԲՀՀ), իրականացնում է աննախադեպ լայնամասշտաբ անտառտնկման ծրագիր Լոռվա մարզի Ջրաշեն և Ծաղկաբեր համայնքներում:

«Հարավային Կովկասում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացում անտառային լանդշաֆտների վերականգնման միջոցով» ծրագիրը իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի (ԲՀՀ Գերմանիայի, Կովկասի և Հայաստանի մասնաճյուղեր), ՀՀ Բնապահպանության և Գյուղատնտեսության նախարարությունների («Հայաստան» ՊՈԱԿ), «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի, Ջրաշեն և Ծաղկաբեր համայնքների վարչական տարածքների համագործակցության արդյունքում: Ծրագիրը ֆինանսավորվում է գերմանական KfW բանկի կողմից՝ կլիմայի փոփոխության միջազգային նախաձեռնության շրջանակներում:

Ծրագիրը սկիզբ առավ 2008 թվականի վերջին, և մինչ օրս վերահիշյալ ծրագրի շրջանակներում, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը տնկել է մեկ միլիոն տնկի: Սա տնկիների մի աննախադեպ թիվ է, որը կազմակերպությունը տնկել է մեկ տարվա ընթացքում: Անտառտնկման գոտին զբաղեցնում է Լոռվա մարզի 400 հա անտառազուրկ տարածքը, որը հեռու է Սպիտակ քաղաքից:

«Կլիմայի փոփոխությունը տեղի է ունենում ամբողջ աշխարհում և Հայաստանը բացառություն չէ: Մենք ակնկալում ենք, որ կկարողանանք պայքարել ընդդեմ կլիմայի փոփոխության անցանկալի հետևանքների Հայաստանի այն տարածաշրջաններում, որոնք առավել խոցելի են: Անտառատունկը, թերևս, այս նպատակին հասնելու լավագույն լուծումներից մեկն է:», նշեց «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի տնօրեն Մհեր Սադոյանը:

Այս բնապահպանական ծրագիրը հարյուրավոր աշխատատեղեր է ստեղծել համայնքների բնակիչների համար, ովքեր հաճախ հարկադրված են գաղթել արտասահման, մասնավորապես Բուսաստան՝ իրենց ապրուստը այնտեղ հայթհայթելու: Ծրագրի նպատակներից է նաև զարգացնել համայնքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը: Ավելի քան 300 բնակիչ Ծաղկաբեր, Ջրաշեն և Մարգահովիտ համայնքներից մասնակցել են անտառտնկման աշխատանքներին այս ծրագրի շրջանակներում:

Ծրագրի իրականացման համար նախատեսված տնկիները բերվել են Հայաստան Ծառատունկ Ծրագրի Մարգահովիտ համայնքի Միրաք տնկարանից, ինչպես նաև Գետիկի ավազանի գյուղերի տնամերձ տնկարաններից: Այս նորաստեղծ անտառը կազմված է կաղնու, սոճու, հացենու, թխկենու տնկիներից, որոնք բնորոշ են այս տարածաշրջանի համար:

«Հայաստան Ծառատունկ Ծրագիրը պատիվ ունի համագործակցելու գերմանական KfW բանկի և ԲՀՀ-ի հետ: Համատեղ ուժերով մենք պայքարում ենք կլիմայի փոփոխության դեմ և ստեղծում կանաչ ապագա գալիք սերնդի համար», շեշտեց Մհեր Սադոյանը: